Հայկական գիտական-ակադեմիական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտադրված է «Միջազգային ընդհանուր թույլատրագրի
ոչ առևտրային գրագիտության 3.0» արտադրագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported License.

Դուք կարող եք.
- ազատորեն տարածել, տպագրել, ցուցադրել, կատարել և մեկնաբանել հեղինակային իրավունքի տակ գտնվող նյութը
- մշակել հեղինակային իրավունքի տակ գտնվող նյութը հետևյալ պայմանների ներքո՝

You are free to:
- Share — copy and redistribute the material in any medium or format
- Adapt — remix, transform, and build upon the material

1368
Չեմ հասկա
Ինչու պետ

ԼԱՄԲԻ ԼԱՄՊԱ ԲԱՐԻ ՃԱՄԲԱ

891.71-93

ՍՈՍՆԵԼ ՔԵՋ ՀԵՏ-ԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԵՏ

ՓՈԽԱԴՐԵՑ ՌՈՒՍԵՐԵՆԻՑ ԱԹ. ԽՆԿՈՅԱՆ:

ՎԱՀ. ՍԳԱԳՐԱԿԱՆ ԵՐԵՎԱՆ, ՊԱՏՎ. №1439

Լամպան ընկած տան անկյունում
հեկեկում եր, հա հեկեկում.

«Ցեռ մրսած եմ,
յես սոված եմ,
աքսորված եմ,
մոռացված եմ։

Զորանում ե
լայն բուկս,
չորանում ե
պատրույգս.
շերտ-շերտ փոշի
ապակուս,
յես խավար եմ,
յես անլույս։

Զեմ հասկանում վոչ, վոչ, վոչ
ինչու պետք չեմ տանտիկնոջ։

Բայց յեղել ե
ժամանակ,
վոր նստել են
լուսյախս տակ։
Շուրջս թռել
թիթեռներ
յեվ թևերը
միշտ վառել։
Իմ հայացքը
վառ ճաճանչ.
լուսամփոփս
բաց-կանանչ.

Հ 39075

Մենակ չեյի՝
ինձ ու ինձ.
բա բամբասակ
են պղինձ
ինքնայե՞ռը
սեղանիս՝
տունն անում եր
տաք բաղնիս։
Թշթշում եր,
թշթշում,
ուշքը գնում.
վշվշում։
Սեղանատանը այսոր
մի լամպ տեսա անսովոր.
ասում եյին թե միթում
նա վառում է հիսուն մոմ։
Ցեփած հաֆն է
ծիծաղում...
ի՞նչ է յեկել
նազ ծախում։
Լամպ ասածդ ել,
տո՛, ի՞նչ լամպ...
քաչալ գլուխ
մի կաղամբ.
փորը՝ ուռած
մի սրվակ.
Լուսամփոփի
փեշի տակ,
վերևից ել
բերընփակ.
Սրվակուն ել՝
հազիվ հազ՝
Յերեք թե չորս
բարակ մազ։

Յես ասացի.
— հե՛յ դրսեցի
քաղաքացի,
լավ իմացի.



դու անպատրույգ,
դու աննյութ։
մի տեսնեյի
վառելդդ.
բերընփակ է
սրվակդ,
ել վո՞նց վառեն
կրակդդ։

Քա դ աքացին կանաչի,
պա տասխանեց.— «բանդ չի

Յես նրան թե՝
ամոթ չի՞,
վոր ասում ես
բանդ չի։

Ա՛յ, այս տանը
տաս տարի
յես լույս տվի,
լույս արի.
այդ տաս տարին
քիչ բան չի.
Դեհ, ել ինչո՞ւ
բանս չի։

Ա՛յ, ասում եմ
այստեղ քեզ,
պարզ ու հեշտ եմ
վառվում յես։
Հնուց-բնուց
մի ինչ կա՝
չիկան լուցկի—
սպիշկա.
ինձ վառում ե
լուցկին այդ,
ինչպես ոջախ,
մոմ ու փայտ։

Իսկ ձեզ համար
ի՞նչ ճարեն,
վոր ինձ նման
հեշտ վառեն։

Բայց դուք, վո՛չ, վո՛չ, վո՛չ.
Նորելուկ ինքնակոչ
քաղաքացիք
արտասահմանցիք,
լավ իմացեք,
վոր լամպա չեք, այլ սրվա՛կ
լուսամփոփի փորի տակ»։



Իսկ նա ասում է.

«Ինչ էլ խոսում է.
եդ՝ տեղը չառավ,
այ հիմար պառավ.
Ինքդ՝ ծույլ
լույսդ՝ թույլ.
յեվ խոսելդ էլ
զուր է զոռը.
իմ լույսն ուր...
քո լույսն ուր...

Լույս եմ տալիս
առատ ու լի,
լույս եմ տալիս
հրաշալի.
ազգական եմ
հուր կայծակին։
Ցես լամպա եմ
էլեկտրական-տնտեսական,
մեծահամբավ լույս՝ անբավ

Ինձ պետք չի
նավթ ու պատրույգ.
այ, մեքենան՝
աշխույժ, առույգ՝
կուղարկի ինձ
լույսի հոսանք.
մրոտ լամպից
այ, ուր հասանք։

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԾՈՒ. ԴԱՍԵՆՏԵԼ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

Պտուտակով
մեկն ու մեկն էլ
թե միացնի
հենց յերկու թել,
իմ ճրագում.
շատ սուս ու փուս
կստացվի ջինջ
ու պայծառ լույս։

Նավթի լամպը՝ այ թանգարան
Նոր սերունդը նայի վրան»։

Կարտոֆիլի մոմը հանկարծ
կմկմալեն մի բլբլաց.
«Դուք սաացիք թե նրանում
հիսուն մոմ են մեկեն վառվում.
խաբել են ձեզ շատ անպատկառ,
են տեղ ուր ե թե մոմ կա վառ»։

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220039075

№ 9 ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 9

A II 39075

ԳԻՆՆ Է 35 ԿՈՊ.

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ—1926

Գրառեպվար № 286բ. № 335. Տիրաժ 5000.